

մեզ յեմայ ի Դրինն. սակաւ աշխատող զարժանաւոր քհ. զԱն-  
սոն նամակի կոկող. աղաչեմ յիշել ի տէր.» (նաև Հա. 1928,  
էջ 360—361): Նոյն ձեռագիրին մի ուրիշ յուշագրութիւնը.  
«Յայսմ ամի թուականիս հայոց ՊԹ. (= 1360) փոխեցաւ առ  
Քս. յեմի Աւեսիս միակեց եղբայր վերոյգրեալ Սեթ վրդ.ի. յիշա-  
տակ նորա և յիշողքն օրհնեալ եղիցի յաւիտեան. ամէն»:  
(Անդ. էջ նոյն):

**ՍՏԵՓԱՆՈՍ ԳՐԻՉ.** — 1360ին «ընդհովանեաւ Աթոռակալ  
Առաքելոց» կ'ընդօրինակէ Աւեսարսն մը, յիշատակարանին մէջ  
կը յիշուի Գրիգոր փակակալ Ս. Յակոբի վանքին: (Թորոս Աղբար,  
Բ.):

**ՍՏԵՓԱՆՈՍ ԳՐԻՉ.** — Մբ. 1625ին Ս. Յակոբի վանքին մէջ  
կ'ընդօրինակէ Հաւսփածոյ ձեռագիր մը (ՄՁ. Թ. 1483), այս յի-  
շատակարանի համաձայն. «... տեսի զայս գիրքս ի սբ. քա-  
ղաքն Երսղմ. և ցանկացայ և սկսայ և աւարտեցի զսա ի վայե-  
լումն անձին իմոյ. . . ողորմի ասէք ինձ անարժանի Ստեփան-  
նոսի և իմ ծնաւդացն հաւրն Փակոսին և մօրն Շեանաւորին. . .  
ամէն: Գրեցաւ գիրքս ի սուրբ քաղաքս Երսղմ. ի դուռն Ս.  
Յակոբ Առաքելոյն, ի յաթոռն հայոց ազգիս. ի հայր. սբ. Ա-  
թոռոյս տէր Գրիգոր սրբազան արհի և պանծալի արքեպօսին.  
. . . գրեցաւ գիրքս ի թվականիս հայոց ի ՌՀԳ (= 1625), ի  
դառն և ի նեղ ժամանակիս. . . : Քս. Ած. քո առատ ողորմու-  
թեամբդ ողորմեա Մարգարայ սարկաւազին, որ բազում չար-  
չարանաւք զամենայն եկեղեցեաց լուսերն կու վառէ»: (Խաչ-  
Յոց. տետր. 17, էջ 2054—55):

**ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊՍ. ԲԵՐԻԱՅԻ.** — Մբ. Գուևի ազգատոհմէն.  
ՏԳ. Ս. Յակոբի վանքին երեսուն տարի շրջանուս պաշտօնեայ  
ըլլալէ վերջ 1727ին կ'ապաստանի Անտոնեանց Բրէմայ վանքը՝  
նախապէս ալ դիմելով Նազարէթի Յրանչիսկեանց մօտ: Կը  
վախձանի ի Քրէյմ: Տեղեակ էր արաբ, ասորի, թուրք և լատին  
լեզուներու (Հա. 1902, էջ 292): (ՏԵՍ նաև ՄՁ. Թ. 1943 յի-  
շատակարանին վերջի ծանօթութիւնը ուր կը յիշուի Ստեփանու  
եպս. Պերոսի):

**ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊՍ. ԲԼԻԵՅԻ.** — 1603ին Լս. Խոնիկ գրչին ձեռ-  
քով ընդօրինակուած Մաշոցի մը ստացողն է Ստեփանոս եպս.